

**ՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻԹԹԻԼԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ: ՎԱՆԻ ԲԱՂԱ-ԲԱՊԵՏ Պ. ԳԱՓԱՄԱՃՅԱՆԻ
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ**

Ավերիս Հարությունյան

Արշակ Բայան

Երիտթուրքերի անդառնալի ծախողումներն արտաքին քաղաքականության մեջ և հուսախաբությունները 1912թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընդդիմադիր ուժերին ընձեռեցին գործելու լայն հնարավորություն:

Այս շրջանում Օսմանյան հասարակությունը, ինչպես մյուս տարածաշրջաններում, այնպես էլ Վանում բաղկացած էր չորս խավերից.

ա) համիդեականներ (կրոնամոլներ, խոջաներ և քրդեր),

բ) Նազըմ փաշայի կողմնակիցներ (թուրքական բանակի կեսը և չերքեզները)

գ) իթթիհատականներ,

դ) իթթիլաֆականներ¹:

Աստիճանաբար հզորանում էր 1911 թ. նոյեմբերի 21-ին ստեղծված իթթիլաֆ կուսակցությունը, որի անդամներն էին՝ իշխան Սաբահեդդինը, գյումյուլճինացի Իսմայիլ բեյը, Գոճա Սապրի էֆենդին և ուրիշներ: Միաժամանակ, Սատըղ բեյի ղեկավարությամբ Կ. Պոլսում ստեղծվում է «Սպաների միություն» մարմինը, որի առաջնահերթ խնդիրն էր տապալել Պատերազմական (Ռազմական) նախարար Մահմուդ Շևքեթ փաշայի իշխանությունը:

Օգտվելով իտալա-թուրքական պատերազմում իթթիհատականների կրած պարտությունից՝ 1912 թ. հուլիսի 17-ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որի հետևանքով հրաժարական տվեց Սայիդ փաշայի կառավարությունը, և նոր վարչապետ դարձավ Ահմեդ Մուխտար փաշան²,

* Հոդվածը ներկայացվել է 17.02.2020 թ., գրախոսվել է 08.03.2020 թ., ընդունվել է տպագրության 18.04.2020 թ.:

¹ Տե՛ս «Մշակ», 1912 թ., փետրվարի 19, թիւ 38:

² Տե՛ս **Lewis Bernard**, The Emergence of Modern Turkey, London, 1968, էջ 223: .

որը Երեսփոխանական ժողովին և Սենատին ներկայացրեց խորհրդարանը ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու սուլթանական հրամանագիրը: Արդյունքում 1912 թ. օգոստոսի 5-ին լուծարվեց Օսմանյան խորհրդարանը¹: Որոշ իթթիհատականներ, որոնց թվում էին նաև հին թուրքերից Ահմեդ Մուխթար և Քեամիլ փաշաները, դժգոհ լինելով իրենց կուսակցության վարած քաղաքականությունից, միացան իթթիլաֆին: Ստեղծվեց նոր խորհրդարան Քեամիլ փաշայի վարչապետությամբ: Իթթիհատականներից շատերը, խուսափելով հետապնդումից, անցան ընդհատակ, իսկ ոմանք էլ ապաստանեցին հայերի մոտ, որոնց «հայերը կը պահէին զիրենք աչք առնելով ամէն վտանգ, ինչ որ շատ շուտ պիտի մոռցուէր եւ կատարեալ ապերախտութեամբ պիտի փոխարինուէր»²:

Երկրի քաղաքական փոթորկալի իրավիճակը և իթթիլաֆական Թուրքիայի նոր պարտությունները Բալկանյան առաջին պատերազմում (1912 թ. հոկտեմբերի 9 - 1913 թ. մայիս 30) իրենց արձագանքն են թողնում արևմտահայ իրականության վրա՝ պատճառ դառնալով ինչպես մերձակատային, այնպես էլ հայաբնակ շրջանների, այդ թվում նաև Վանի նահանգի հայության կոտորածների սպառնալիքին³:

Տարածքային կորուստներին համահունչ՝ Բ. Դուռը 1912 թ. դեկտեմբերի 8-ին քննության առավ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու հարցը՝ նպատակ ունենալով կանխել մեծ տերությունների միջամտությունը երկրի ներքին գործերին: Սակայն հայերի գրեթե բոլոր իրական պահանջները մերժվեցին, և շատ շուտով պարզ դարձավ, որ «Քյամիլ-Նորատունկյան դահլիճն» ընթանում էր հին վարչակարգի քայլերով:

Իրադարձությունների զարգացման հարաճուն վտանգի պայմաններում անհանգիստ են անցնում 1913 թ. Ծննդյան տոները Վանի նահանգի մի շարք բնակավայրերում, մասնավորապես Արճեշում, որտեղ առևտրական գործունեությամբ էին զբաղված Վանի և Բաղեշի 100-ից ավելի հայեր: Տեղի զինվորական հրամանատար հաջի Ջայիդ փաշան, որ մինչ այդ լավ վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ, կեղծ լուրեր է տարա-

¹ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 627:

² **Սաղըրեան Ս.**, Կիսադարեան Յուզամատեան (1895-1945). Ուղեորություն մը Արգէսուէն Տաւրոս, Փարիզ, 1948, էջ 67:

³ “Правительственный вестник”, Петербург, 1912, N 6,(19), с. XI.

ծում և հեռագրեր ուղարկում Կ. Պոլիս, թե իբրև, հայերը գաղտնի պայթուցիկներ են արտադրում և ռազմական պատրաստություններ տեսնում ապստամբելու համար: Վստահության մթնոլորտը վերականգնելու հույսով հայերը դիմում են գավառի կայմակամին, ապա Վանի առաջնորդի միջոցով նաև Վանի վալիին, որը, բարեբախտաբար, հարթում է գործը¹:

Իթթիլաֆի կառավարման շրջանում Վանում ամեն ինչ կարծես թե լավ էր ընթանում մինչև այն պահը, երբ սրվում են առանց այդ էլ ոչ բարեկամական հարաբերությունները քաղաքապետ Պ. Գափամաճյանի և դաշնակցականների միջև: Վերջիններս ցանկանում էին, որ Վանի մեծահարուստ անձնավորությունը նյութական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերեր իրենց կուսակցությանը, սակայն Պ. Գափամաճյանը, լինելով ռամկավարների համակիր, ամեն անգամ մերժում էր նրանց պահանջը: Գեղեցիկ հորդորներն ու սպառնալիքներն արժեք չունեին նրա համար: Նա դաշնակցականներին հանդիմանում է՝ ասելով. «Ես համաձայն չեմ ձեր գործելակերպին զոր վնասակար կը գտնեմ և հետեաբար, չեմ կրնար իմ նիւթական օժանդակութեամբս մասնակցիլ ձեր մեղքերուն²»:

Հետագայում նրա և Վանի դաշնակցական կոմիտեի հարաբերություններն այն աստիճան են լարվում, որ Պ. Գափամաճյանը ստիպված մտերմական նամակ է ուղարկում Կ. Պոլիսի հայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունուն և գանգատվելով դաշնակցական պարագլուխներ Արամի ու Իշխանի ազգավնաս գործունեությունից՝ խնդրում, որ այդ երկու «օտարական խռովարարներին» հեռացնեն Վանից: Նամակի բովանդակության մասին Վ. Փափազյանը գաղտնի տեղեկացնում է Ա. Վոսմյանին՝ միաժամանակ զարմանք հայտնելով, որ «այս մարդը տակալին կ'ապրի»: Իր հերթին անհեռատես Հ. Արշարունի պատրիարքն այդ նամակն ուղարկում է Վանի առաջնորդական փոխանորդ Հովսեփ Եպիսկոպոս Սարաճյանին, իսկ վերջինս էլ այն դնում է Վանի Քաղաքային ժողովի քննությանը, որի անդամների մեծ մասը դաշնակցականներ էին³:

Այս դեպքերից մի քանի օր անց՝ 1912 թ. դեկտեմբերի 23-ի երեկոյան՝

¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, փետրվարի 7, թիւ 29:

² **Յուշեր Արմենակ Եկարեանի**, Գահիրե, 1947, էջ 169:

³ Տե՛ս **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 170:

Դավիթ մարգարեի տոնին, երբ 72-ամյա քաղաքապետ Պետրոս Գափամաճյանն իր սահնակ-կառքով պատրաստվում էր տոնախմբության մեկնել իր ազգական Մարճիտճյանի (Ճիտագյանի) տուն, դավադիր խումբը ատրճանակի չորս հարվածով իր տան մուտքի մոտ սպանում է նրան¹:

Ահաբեկչությունը բավական ցնցող տպավորություն է թողնում Վանի՝ հայ և թուրք հասարակության վրա, որովհետև Պ. Գափամաճյանը Վանի ազդեցիկ անձնավորություններից էր. վարում էր քաղաքապետի պաշտոնը և եռանդուն մասնակցություն ուներ քաղաքի հասարակական և պետական գործերին²:

Պ. Գափամաճյանի հուղարկավորությունը տեղի ունեցավ 1912 թ. դեկտեմբերի 25-ին Վանի Նորաշենի եկեղեցում թեմական առաջնորդ Հովսեփ Եպիսկոպոս Սարաճյանի նախագահությամբ և 1000-ից ավելի մարդկանց, Վանի նահանգապետի ներկայացուցչի, զորքերի հրամանատարի, օտարազգի հյուպատոսների և միսիոներների մասնակցությամբ: Դամբանականներով հանդես եկած բոլոր ելույթ ունեցողները՝ սրբազան հայրը, ամերիկացի միսիոներ Ռեյնոլդսը, գերմանացի Սպեոն, Վանի վարժապետարանոցի տեսուչ Միքայել Մինասյանը, Միհրան Տևկանցը և Աբրահամ Բրուտյանը, միահամուռ մատնանշում են, որ Պ. Գափամաճյանի սպանությունը «սև ձեռքերի» գործն էր՝ կատարված հետին նպատակներով³: Իսկ առաջնորդ Հովսեփ Սարաճյանն էլ չի թաքցնում, որ ոճիրը կատարվել էր հայերի ձեռքով:

Պ. Գափամաճյանի սպանության վերաբերյալ ժամանակի պարբերական մամուլում շրջանառվել է երկու հակադիր մոտեցում.

ա) այն, որ նրան սպանել էին դաշնակցականները՝ Արամի և Իշխանի թելադրանքով

բ) իշխանություններն էին նրան սպանել, որպեսզի յուրացնեն «պելեդիերեիսի» (քաղաքապետի - Ա. Հ.) նրա պաշտոնը և հարստությունները:

Այն, որ դաշնակցությունը դեռևս 1905 թ. սպառնացել էր սպանել Պ. Գափամաճյանին, և նույնիսկ հրկիզվել էր հանգուցյալի գեղեցիկ տունը, չի ժխտում անգամ դաշնակցական մամուլը: Այդ մասին «Կոհակ»-ն իր խմբագրականում գրում է. «Ընդհանուր համոզում է թէ Դաշնակցա-

¹ Տե՛ս «Բիթանիա», Կ. Պոլիս, 1912 թ., դեկտեմբերի 26 - 1913 թ. հունվարի 8, թիվ 18:

² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913 թ. մարտի 2, թիվ 47:

³ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, հունվարի 17, թիվ 11:

կաններ սպաննած են Հաճի պէյը, որովհետեւ ողբացեալի մապէն, այսպէս ասած, արուած էր ասկէ 5-6 տարի առաջ Դաշնակցականներու հետ... Որովհետեւ անախորժ շշուկներ կը պտտէին քաղ. հոսանքի մը կողմէն թէ թուրքերը սպաննած են եւ այլն կարգ մը ասօր նման երախակայան խեղաթիւումներ»¹:

Միաժամանակ, դաշնակցութիւնը հանգուցյալին չէր տեսնում որպէս կուսակցութեան զորեղ հակառակորդ²: Իրականում այդ մասին «Ազատամարտ»-ը արձանագրում է. «Կառավարութիւնը, որ ամէն բանի մէջ Դաշնակցութեան մատը կ'ուզէ տեսնել, ասիկա ալ իսկոյն վերագրեց նոյն կուսակցութեան. թէն ցարդ պաշտօնապէս ոչինչ չէ ըրած. չնայելով որ հասարակութեան մէջ ծայր տուած են կարգ մը փսփսուքներ, որոնց համաձայն իբր թէ Գափամաճեան հաստատապէս մտադրութիւն է ունեցեր նոր տարուան առթիւ խոշոր գումար մը նուիրել ազգային ունէ հաստատութեան մը և հետևաբար, այդ պատճառով ալ զոհ գացեր է իւրայիններու դաւադրութեան»³:

Կառավարութիւնը և մասնավորապէս Վանի ոստիկանապետ Գոնեալ Մուստաֆան, որ մի քորդ ավազակի սպանութեան համար տասնյակ հայերի էր պատժել, քաղաքապետի սպանութեան վերաբերյալ սկզբում քննութիւն չի կատարում, ընդհակառակը, պաշտպանում է դաշնակցութեանը, որի հետևանքով սպանութեան բացահայտումն անց- նում է անաղմուկ: Ավելին, դաշնակցութեան Վանի կոմիտեն փորձում է արդարանալ, որ ինքն ամենևին էլ տեղեկութիւն չունի այդ սպանութեանից, կոր իբր Պ. Գափամաճյանին ինքնազլուխ սպանել էր նախկին դաշնակցական մի զինվոր, որին, իհարկե, ոչ ոք չի հավատում:

Օգտագործելով այն հանգամանքը, որ Պ. Գափամաճյանի ու դաշնակցականների միջև կային լուրջ տարաձայնութիւններ՝ իշխանութիւնները լուրեր տարածեցին այն մասին, թէ նրան սպանել են իր հակառակորդները: Համենայն դեպս, թուրքական մամուլը («Ալեմտարի» և «Իֆ-համի») մեղադրանքը բարդում է դաշնակցութեան վրա՝ նկատելով, որ ոճիրն ի կատար էր ածվել դաշնակցութեան՝ Վանի գրասենյակի փողո-

¹ «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, փետրվարի 23/26, թիւ 5:

² Տէ՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913 թ., մարտի 2, թիւ 47:

³ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913 թ., հունվարի 29, թիւ 1123:

ցում, և որ սպանվողը դաշնակցության հակառակորդն էր¹:

Հետագայում, իշխանությունների շրջանում կասկածներ չհարուցելու համար, ինչպես նաև օգտագործելով պատեհ առիթը դաշնակցականներին հալածելու համար, Վանի նահանգապետ Իզգեթ բեյի թելադրանքով ձերբակալվում են դաշնակցականներ Գարեգին Ոսկերջյանը և Շիրին Հակոբյանը, որոնց մեղադրում են գյուղերում ինքնապաշտպանության համար գեներ վաճառելու մեջ²: Հետապնդման են ենթարկվում նաև վանեցի դաշնակցականներ Թևոսը, Ալեսը, Փանոսը, և հալածյալների թիվը շուտով հասնում է 10-15-ի³: Այդ մասին Ա. Վոսմյանը դաշնակցության Ամերիկայի կենտրոնական կոմիտեին ուղղված իր՝ 1913 թ. նոյեմբերի 20-ի նամակում հայտնում էր, որ «Գաբամաճեանի սպանութիւնը անձանօթներու ձեռքով բարեպատեհ թուեցաւ կուսակալին հալածանքի սկիզբը դնելու: Այդ սպանութիւնը Դեկտ. 23-ին կատարուած էր մինչ ես մեկնած էի Դեկտ. 4-ին, իսկ ընկերս Արամը ծանրապէս հիւանդ պառկած էր Ամերիկեան հիւանդանոցը, քանի մը ամսիներ: Վերջապէս կոչնագիր ուղարկեցին ինձի եւ Արամին - սպանութեան մէջ ամբաստանելով երկուսիս ալ: Կոչնագիրը մերժեցինք, հեռագրով խստիւ բողոքեցինք - 4 օր ետք կուսակալը պաշտօնանկ, շատ չանցած դատական գործն ալ փակեցին»⁴:

Այսպիսով, քաղաքապետի սպանությունը դաշնակցությանը վերագրելը միմիայն կասկածի հետևանք էր՝ զուրկ իրեղեն որոշակի ապացույցներից, չնայած առկա էին հնարավոր բոլոր ենթադրությունները: Թեև դաշնակցության Վանի կոմիտեն հերքում էր ժամանակին իրենց հասցեին հնչեցված մեղադրանքները, այդուհանդերձ նրանց կողմից պաշտոնական որևէ պատասխան չի տրվել⁵:

Պ. Գափամաճյանի սպանության վերաբերյալ առկա են նաև իշխանության մեղսակցության փաստարկները: Վանի ռուսական հյուպատոս Ս. Օլֆերևը, քաջատեղյակ լինելով դեպքերին, հարկ էր համարում հայտնել Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսին, որ Պ. Գափամաճյանին

¹ Տե՛ս «Բիւթանիա», Կ. Պոլիս, 1912 թ., դեկտեմբերի 26 - 1913 թ. հունվարի 8, թիւ 18:

² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913 թ., մարտի 2, թիւ 47:

³ Տե՛ս «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913 թ. հունվարի 29, թիւ 1123:

⁴ **Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԱ հատոր**, Պէյրութ-Յունուար, 2015, էջ 289:

⁵ Տե՛ս «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, մարտի 13/26, թիւ 9:

սպանեցին ոչ թե դաշնակցականները, այլ թուրքական պաշտոնյաները, որպեսզի մսխեին նրանից վերցրած այն մեծ գումարը, որի մասին տեղյակ էր միայն հանգուցյալը¹:

Այն, որ Պ. Գափամաճյանի սպանությունն իրականացվել էր իշխանությունների թելադրանքով և քրդերի ձեռքով, վկայակոչում է նաև Տրապիզոնում իտալական գլխավոր հյուպատոս Գորինին՝ Կ. Պոլսում Իտալիայի դեսպան Գարրոնին ուղղված 1913 թ. մարտի 8-ի իր թիվ 245/39 գաղտնի հեռագրում, ուր մասնավորապես նշում է. «...նույնիսկ Վանի քաղաքապետ Կապամաճյանի (իմա՝ Գափամաճյանի – Ա. Հ.) սպանությունը դեռևս բացահայտված չէ... Այս վերջին օրերին մի բախում տեղի ունեցավ Վանի ժանդարմների և քրդական մի ավազակախմբի միջև: Հայ ժանդարմը սպանեց քուրդ ավազակապետին, որին վերագրվում էր նաև Կապամաճյանի սպանությունը: Հայ ժանդարմն այժմ ձերբակալված է և դատապարտված է»²:

Սպանությունը բացահայտելու համար ՀՅԴ-ն Պ. Գափամաճյանի որդուն՝ Սեթ Գափամաճյանին, առաջարկում է կազմել ընկերական ատյան՝ հարցը քննելու համար: Վերջինիս կողմից ատյանի թեկնածուներ են առաջադրվում դաշնակցականներ Պ. Ռ. Շատվորյանը և Հ. Գոնդակճյանը: ՀՅԴ-ի Վանի մասնաճյուղն անհասկանալի պատճառներով առարկում է նրանց թեկնածությունը, որից հետո ընկերական ատյանի անդամներ են հաստատվում հնչակյաններ Ս. Բրուտյանը և Փարամազը³:

Սակայն արդյունքում հանցագործությունն այդպես էլ չի բացահայտվում: Պ. Գափամաճյանի սպանության գաղտնիքը մնաց վարագուրված թանձր քողի տակ: Հանձին Պ. Գափամաճյանի՝ Վան-Վասպուրականը կորցնում է մեծահամբավ մի քաղաքապետի, որը մեծ դեր էր խաղացել Վան-Վասպուրականի կրթության, լուսավորության և տնտեսական առաջընթացի գործում:

Պ. Գափամաճյանի փոխարեն քաղաքապետի ժամանակավոր պաշ-

¹ Տե՛ս ԱԳՅԱ ՔԻ, ֆ. 1300, ց. 29, գ. 96, թ. 8:

² **Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հատոր Ա 1913-1917**, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց՝ Արամայիս Բալոյանը, Երևան, 2008, էջ 24:

³ Տե՛ս «Կոհակ», Կ. Պոլիս, 1913, մայիսի 1/14, թիվ 16:

տոնակատար է նշանակվում Վահան էֆ. Մարությանը, իսկ քաղաքապետի նոր ընտրությունները նախատեսվում են անցկացնել 1913 թ. մարտին ցենզ ունեցող քաղաքացիների կողմից¹:

Պ. Գափամաճյանի ահաբեկչությունից հետո Վանի նահանգում կազմակերպվեցին նաև մի շարք նոր սպանություններ ևս, որոնք Ա. Եկարյանը վերագրում է դաշնակցականներին: Ազգային և կուսակցական անհամաձայնության արդյունքում սպանվում են Բերկրի գավառի Գործոթ գյուղի բնակիչ մելիք Մարկոսը, որը գյուղը որոշ չափով զերծ էր պահել քրդական հալածանքներից: Նրա մասին Ա. Եկարյանը գրում է. «Ազդեցիկ մարդ էր ան և անցեալին մէջ շատ անգամ ընդհարումներ ունեցած շրջակայ քիւրտ ցեղապետներու հետ: Կտրիճ, հաստատակամ և ինքզինքը պարտադրող շնորհիւ իր այդ առաւելութիւններուն, միշտ ալ յաղթական դուրս եկած էր յիշեալ պայքարներէն: Նաեւ հարուստ մարդ էր: Նահապետական ընտանիքի մը զօրաւոր պետը՝ որուն տան դուռը երբեք չէր գոցեր ամէն ազգի ճամբորդներու առջեւ, որուն տունէն ներս սեղանը չէր վերցուեր գետնէն և որուն օճախը միշտ վառ էր՝ կերակրելու համար ճամբորդ հիւրերը²»:

Համանման հանգամանքներում է սպանվում նաև Հայոց Ձորի Անգղ գյուղի գյուղապետ Հարությունը, որը խելացի և փորձառու անձնավորություն էր, և որի գործունեությունից գոհ էին գյուղացիները: Գյուղում վիճակը լավ էր այնքան ժամանակ, մինչև որ Անգղ մեկնեց Իշխանը և Հարությունից պահանջեց «ասկէ յետոյ հրահանգները իրմէ ընդունի և գործէ այնպէս, ինչպէս ինք կը պահանջէ³»: Իսկ Իշխանը պահանջում էր, որ Անգղի բոլոր գյուղացիները գյուղապետի պարտադրանքով զենք գնեն դաշնակցականներից:

Սակայն նրանք փոխհամաձայնության չեն գալիս, որի հետևանքով Հարությունը սրախողխող է լինում դաշնակցության նորսերնդական գաղափարների ազդեցության տակ գտնվող իր իսկ հարազատ որդու և նրա մեղսակից ընկերների ձեռքով:

Ակամայից հարց է առաջանում, թե ում դեմ էր դաշնակցությունը հայ գյուղացիությանը գաղտնի զինում, երբ այն պետականամետ քաղաքա-

¹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, փետրվարի 8, թիւ 30:

² **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 170:

³ **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 171:

կան կուսակցություն էր և իր պատգամավորական մանդատներն ուներ խորհրդարանի մեջ: Արտաքուստ դաշնակցության՝ Վանի պարագլուխները՝ Իշխանը, Արամը, Վ. Փափագյանը, Թևոսը և ուրիշները, հայ-թուրքական և հայ-քրդական զինված խառը խմբեր էին կազմում իբր իթթիլաֆի կարծեցյալ վտանգի դեմ¹, սակայն ըստ Ա. Եկարյանի՝ այն ուղղված էր Ռուսաստանի դեմ, քանի որ Բալկանյան պատերազմի օրերին սրվել էին ռուս-թուրքական հարաբերությունները²:

Այնուհետև դաշնակցության թելադրանքով սպանվում է Վանի՝ Այգեստանի թաղապետներից մեկը՝ Նազարեթ Թնդուխյանը, այն բանի համար, որ նա հայտարարել էր, թե ինքը շատ բան գիտի դաշնակցականների ներքին կյանքի մասին, որոնք չափազանց նողկալի էին: Արմենակ Եկարյանը, մեջբերելով սպանության կազմակերպիչներից մեկի՝ Հարություն Չավուշի վկայությունը, գրում է. «Տասներկու հոգանոց դավադիր խումբ մը դարանի կը մտնէ Ատոմ Աղայենց տունին կից աներակներու մէջ: Խարբերոցի և Վանեցիներուն անձանօթ՝ Յարութին Չավուշ անունով մէկը՝ որպէս թուրք, Նազարեթէն կը ներկայանայ հրաւիրելու համար զինք Քէնտրչիի ոստիկանատունը, իր պաշտոնին վերաբերող գործի մը պատրուակով: Նազարեթ, առանց կասկածանքի, կը հետեւի լրաբերին: Որոշեալ տեղը հասած, տասնամէկ դաւադիրները կը յարձակին անզէն մարդուն վրայ, կը կաշկանդեն զայն և պարկ մը անցնելով գլուխն ի վար, կը տանին հեռաւոր պարտեզ մը ու ձեռքն ու ոտքը կապած՝ կը մորթեն ոչխարի պէս: Դժբախտ մարդը խողխողուելէ առաջ, մէկ բան կը խնդրէ այս անագորոյն ոճրագործներէն. - Ըսել իր մէկ հատիկ տղուն, որ ունէ ցուցում չընէ կառավարութեան մօտ: Բայց ի հարկէ ոճրագործները այս պատւերը պիտի չհասցնեն իր տեղը³»:

Այս մարդիկ սպանվում էին այն բանի պատճառով, որ իրենց գավառներում մեծ ազդեցություն ունեին ժողովրդի մեջ և չէին ուզում խաղալիք դառնալ դաշնակցականների ձեռքին: Սպանությունները տեղի է-

¹ «Դրօշակ»-ի խմբագրությանն ուղղված Արամի՝ 1912 թ. սեպտեմբերի 28-ի նամակում կարդում ենք. «Ժողովուրդը լաւ զինուում է, 4 ամսա մէջ Շատախը 1500 ոսկիի գէնք է առել»: Տե՛ս **Արամ Մանուկեան**, Նամականի, ժողովածուի կազմութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւնները՝ Երուանդ Փամպուքեանի, Երեւան, 2018, էջ 572:

² Տե՛ս **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 172:

³ **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 172-173:

ին ունենում Վանում և Նահանգի՝ աչքի ընկնող կենտրոններում, իսկ թե ինչեր էին կատարվում խուլ գյուղերում, անհայտ էին:

1913 թ. մարտին Վանում հարձակման ենթարկվեցին և վիրավորվեցին եղբայրներ Հայկ և Երվանդ Տեր-Մկրտչյանները: Ընդհանուր կարծիքն այն էր, որ հարձակման նպատակը եղել էր ռամկավարների խոսնակ «Վան-Տոսպ»-ի հրատարակումը անհնար դարձնելը, որի գրաշարն ու սրբագրիչն էին երկու եղբայրները: Արձագանքելով կատարվածին՝ «Մշակ»-ն այն համարում է բարբարոսություն և հանդիմանելով իրեն հայ ժողովրդի ամենակենսունակ կուսակցություն համարող դաշնակցությանը՝ նշում է. «Մենք չենք հաւատում, որ Դաշնակց. կուսակցութեան կողմից ուղղակի որոշված ու թելադրված լինեն այսպիսի վայրենի յարձակումներ, որոնց նպատակը նոյնպէս չենք հաւատում որ եղած լինի սպանելը: Բայց կուսակցութիւնը մի այնպիսի մթնոլորտ է ստեղծել, որ այսպիսի յարձակումներ, վայրենութիւններ կարող են պատահել և պատահում են նոյն իսկ ինքնաբերաբար ամեն մէկ քայլափոխում, ամեն մէկ ընկերի կամ խմբի կողմից, իսկ սա աւելի վատ է, որովհետև ապացուցանում է, որ կուսակցութիւնը զուրկ է կարգապահական ոգուց, դիսցիպլինայից, իսկ ընկերները նախապաշարված են ցաւալի մտորումներով յանցաւորը նրանք են, որ առաջ են բերել այս ախտաւոր մթնոլորտը¹»:

1913 թ. մարտի 29-ին սպառնալիքի փորձ է կատարվում նաև Վանի հայ երևելիներից մեկի՝ Ավետիս Էֆենդի Թերզիբաշյանի նկատմամբ. նրանից պահանջում են 50 օսմանյան ոսկի: Չկասկածելով անգամ այդ հարցում դաշնակցականների մեղսակցությանը՝ Ա. Թերզիբաշյանն օգնության համար դիմում է Իշխանին: Սակայն դեպքի բացահայտման ժամանակ ահաբեկման փորձ կատարած երկու չարագործները չեզոքացվում են, և գաղտնի են մնում հանցագործության բուն կազմակերպիչները²: Այդ մասին Ա. Եկարյանը գրում է, որ Դելի Ղազար անունով դաշնակցական խմբապետը, երբ հասկանում է, որ դրամաշորթներն իրենցից են, անմիջապես «կրակը դադրեցնել կուտայ, սպաննուածը կը վերցնեն, վիրաւորը կ'անհետացնեն և խնդիրը կը փակուի...³»:

Ահա այսպիսի լրճուկ միջադեպերն էին, որ երկպառակում էին ժո-

¹ «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 21, թիւ 84:

² Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, ապրիլի 24, թիւ 86:

³ **Յուշեր Արմենակ Եկարեանի**, էջ 155:

ղովրդին և հնարավորություն չէին տալիս զբաղվելու համազգային կազմակերպչական լուրջ գործերով:

Քանալի բառեր- Վան, քաղաքապետ, դաշնակցություն, Գափամաճյան, իթթիլաֆ, սպանություն, ընտրություններ, պարրիառք, Արամ, Ա. Վանյան:

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ВАНА В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ИТТИЛАФА. К ВОПРОСУ ОБ УБИЙСТВЕ МЭРА ВАНА П. ГАПАМАЧЯНА

Аветис Арутюнян, Аршак Баян

Ключевые слова: Ван, мэр, дашнакцутюн, Гапамачян, иттилаф, убийство, выборы, патриарх, Арам Первый Времян

Неудачи младотурок во внешней политике и разочарования во время парламентских выборов 1912г. предоставили оппозиционным силам широкие возможности действовать. После поражения иттихатистов в итало-турецкой войне, 17 июля 1912г. произошел государственный переворот, и власть перешла к партии иттилаф, созданной 21 ноября 1911г.

В период правления иттилафа в Ване, казалось, все шло хорошо до того момента, когда вечером 23-го декабря (в день памяти пророка Давида) 1912 г. предательски был убит 72-летний мэр Петрос Гапамачян.

Относительно убийства П. Гапамачяна в свое время существовало два противоположных мнения: а) его убили дашнакцаканы по приказу Арама и Ишхана, которые хотели, чтобы богатый житель Вана оказал материальное и финансовое содействие их партии. Однако П. Гапамачян, будучи сторонником рамкаваров, каждый раз отвергал их требования. б) Власть убили его, чтобы присвоить его положение и богатство в качестве мэра.

THE ARMENIANS OF VAN DURING THE REIGN OF ITTILAFF. ON THE ISSUE OF THE ASSASSINATION OF P. GAPAMATJYAN, THE MAYOR OF VAN.

Avetis Harutyunyan, Arshak Balyan

key words: Van, mayor, dashnaks, Gapamatjyan, Ittilaff, assassination, elections, Patriarch, Aram, A. Vramyan

The failures and misactions of the Young Turks in the foreign policy in 1912 provided great opportunity to the opponent forces to take actions during the parliamentary elections and win. The surrender of ittihat party during the Italian -

Turkish war caused to the fact that Ittilaff party, formed on 21 November, 1911, won the majority in the election in 1912 and came to the reign.

It seemed that everything was going well in Van until the assassination of the 72-year-old mayor Petros Gapamatjyan during the festival of Davit Profit on 23 December, 1912. There were circulated two motifs concerning the fact of assassination. The first one was that the assassination was carried out by the Dashnak party and the organizers Aram and Ishkhan wanted to revenge him as he showed interest in Ramkavar party. and he had refused to provide both material and financial support to their party. The second one was that the authorities were the organizers as they wanted to take over both his position and possession. Sent from my Sony Xperia™ smartphone.